Բարև՛, հարգելի՛ Ֆուադ,

Իմ անունը Լուսինե է: Ես Երևանից եմ և քեզ պես մի ուսանող եմ: Համալսարանական տարիներից հետաքրքրված լինելով հակամարտություններով և դրանց կարգավորմամբ (մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ և դրա շուրջ ընթացող բանակցային գործընթացով)՝ հասկացել եմ, որ Լեռնային Ղարաբաղի դեպքում հակամարտությունը կառավարությունների միջև է, այլ ոչ թե՝ ժողովուրդների: Ինձ համար այս հակամարտությունը դասվում է այն հակամարտությունների շարքին, որոնք արհեստական ճանապարհով ստեղծվել են այս կամ այն գերտերության կողմից՝ ելնելով սեփական շահից: Թերևս, խնդիրը նրանում է, որ կառավարությունները շարունակում են ճնշված մնալ գերտերությունների կողմից, իսկ ժողովուրդները՝ կառավարությունների: Սա է պատճառը, որ կառավարությունները շարունակում են ատելություն քարոզել միմյանց նկատմամբ իրենց պետության ներսում: Իսկ իրենց պետությունից դուրս միջազգային հանրության համար ժամանակ առ ժամանակ խոսում են խաղաղության և խաղաղ կարգավորման մասին: Սակայն, խնդիրը նրանում է, որ մի կողմը խաղաղ կարգավորման վերջնարդյունքը պատկերացնում է ազգի ինքնորոշման սահմաններում, իսկ մյուս կողմը՝ տարածքային ամբողջականության վերականգման սահմաններում: Մինչդեռ ինձ համար խաղաղությունը վեր է այս սահմաններից: Խաղաղություն ասելով՝ նախ և առաջ պատկերացնում եմ ներդաշնակություն փոխհարաբերություններում: Եթե տեղափոխենք սա հակամարտության ոլորտ, ապա խաղաղ կարգավորումն ինձ համար բանակցային ճանապարհով համատեղ ընդունելի փոխզիջման հասնելն է, որի արդյունքում կարգավորվում է ոչ միայն հակամարտությունը, այլև՝ կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ կարևորվում է համագործակցությունը կողմերի միջև, չէ՞ որ խաղաղության հաստատման համար անհրաժեշտ են երկկողմանի ջանքեր: Թերևս Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը կնպաստի Հարավային Կովկասի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական բարգավաճմանը:

Կարդալով նամակդ՝ մեծ մասամբ կիսում եմ խաղաղության վերաբերյալ քո պատկերացումները, ինչպես նաև հակամարտության բացասական ազդեցությունը մեր երկրների փոխհարաբերությունների վրա: Ուրախ եմ, որ քեզ պես գիտակից մարդու նամակին եմ պատասխան գրում, չէ՞ որ գիտակցությունն է խաղաղության հասնելու կարևոր գործիքը: Ցավոք, մեր հասարակություններում ոչ բոլորն են ձեռք բերել այն գիտակցությունը, որի պատճառով առկա է ոչ միայն զինված, այլև՝ տեղեկատվական հակամարտություն: Միգուցե սա պայմանավորված է նաև նրանով, որ որքան մարդիկ հեռու են ապրում հակամարտության գոտուց, այնքան ավելի հանդուրժող են այլ ազգերի նկատմամբ՝ ի տարբերություն հակամարտության գոտուն մոտ ապրող մարդկանց: Մեկ այլ ցավալի փաստ է այն, որ կառավարությունները, ձգտելով պահպանել ազգայինը, իրականում զբաղվում են ազգայնամոլությամբ, ինչը այլ ազգերի նկատմամբ ձևավորում է ատելություն և անհանդուրժողականություն: Բայց չէ՞ որ մեր պետությունների միջև կան մշակութային նմանություններ: Այս տարի հնարավորություն ունեցա շփվելու ադրբեջանցի երիտասարդների հետ Վրաստանում կայացած աշխատաժողովի ընթացքում և իմ օրինակով կարող եմ ասել, որ մարդկանց ազգությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ շփվելու կամ ընկերանալու համար և

պատմության մեջ տեղ գտած օրինակները նույնպես կարող են փաստել դա: Այդպես, հայերն ու ադրբեջանցիները կողք կողքի խաղաղ ապրել են թե՛ Խորհրդային Միության ժամանակ և թե՛ ներկայումս Վրաստանի Քվեմո Քարթլի մարզի Մառնեուլի շրջանի՝ Միրզոևկա, Ծոփ, Խոժոռնի գյուղերում և այլն:

Թերևս իմ և քո նամակները կարող են նյութական ապացույց հանդիսանալ այն բանի, որ կան խաղաղասեր մարդիկ, որոնք ձգտում են հասնել ազգերի միջև ներդաշնակության:

Հ.Գ. Եթե ցանկանաս շարունակել մեր խոսակցությունը այս նամակներից դուրս ձևաչափում, ապա կից ուղարկում եմ իմ ֆեյսբուքյան էջի հասցեն՝

Հանուն կարծրատիպերի ու ատելության վերացման, Խաղաղասեր մաղթանքներով՝ Լուսինե